



ՎԵՐԱՄՈՒՏ



Ամեն առտու աշխարհի բոլոր աշակերտները դպրոց կ'ուղղուին, սակայն անոնց ժամացոյցները տարբեր ժամեր ցոյց կու տան:

Եկէ՛ք միասին ծանօթանանք տարբեր երկիրներու մէջ սկսող վերամուտին:

ՃԱՓՈՆԻ ՄԷՋ

Դպրոցական տարեշրջանը Ապրիլին կը սկսի: Աշակերտները դպրոց կը մեկնին առաւօտեան ժամը 8:30-ին, մինչեւ կէսօրէ ետք ժամը 3:30: Անոնք կէսօրին ունին 35 վայրկեան դադար ճաշելու համար: Դասերէն ետք աշակերտները հերթով իրենց դասարանները կը մաքրեն:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆՁՆԵՐՈՒ ՄԷՋ

Դասապահը կը սկսի առաւօտեան ժամը 9:00-ին եւ կը տեսէ մինչեւ կէսօրէ ետք ժամը 4:00: Ամերիկացի աշակերտները Շաբաթ օրերը արձակուրդի մէջ կ'ըլլան:

ՓԵՐՈՒԻ ՄԷՋ

Աշակերտները տարագ կը հագուին եւ յաճախ մանչերն ու աղջիկները տարբեր դպրոցներ կը յաճախեն: Փոքր տարիքի աշակերտները դպրոց կը մեկնին առաւօտեան ժամը 9:00-ին եւ կը վերադառնան կէսօրէ ետք ժամը 1:00-ին: Բարձր կարգերու ուսանողներուն դասապահերը կ'երկարին մինչեւ երեկոյեան ժամը 9:00-ը:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԷՋ

Դասապահերը կը սկսին ժամը 7:30-ին կամ 8:00-ին եւ կ'աւարտին կէսօրուան 1:00-ին: Պահերը 45 վայրկեան տեւողութիւն ունին: Կէսօրէ ետքերը յատկացուած են մարզանքի եւ գեղարուեստական յայտագիրներու (երաժշտութիւն, թատրոն...):


ԹԱՅԻԹԻ ՄԷՋ

Խաղաղական ովկիանոսի այս կղզիին մէջ դասապահերը շատ կանուխ կը սկսին, ժամը 7:30-ին: Սակայն աշակերտները կրնան դպրոց գալ նոյնիսկ ժամը 6:30-էն սկսեալ, որովհետեւ օդը տակաւին շատ տաք է՝ ըլլար:

ՊՐԱԶԻԼԻ ՄԷՋ

Բոլոր աշակերտները ընդունելու համար դպրոցական ժամերը երեք մասերու բաժնուած են: Աշակերտները կրնան առաւօտեան, կէսօրին, կամ երեկոյեան 4 ժամ դասապահ ունենալ: Դասարաններուն մէջ կան 40-50 աշակերտներ:

ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՅ՝ ՄԱՐՄՈՒՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵԱՆ
ՆԿԱՐԱԶՄԱՐԿԵՅ՝ ՈՒՅՅՈՒ ԲԵՇԻՇԵԱՆ



Ի՞նչ կ'ըսեն ժամերը: Գծե՛ համապատասխան սլաքները:



Պատկերին մեջ ցույց տրուած օրինակին պէս, գտի՛ր այն թիւերը, որոնց գումարումը կ'ընէ 10:

1	8	8	8	2	3	6	8	7	3
4	3	5	5	6	9	1	8	2	2
6	6	3	7	8	2	8	3	6	8
3	6	4	10				2	8	4
3	8	7					8	1	9
7	2	5					2	6	9
7	7	4					5	9	6
5	3	2	6	9	8	2	5	1	4
5	7	7	3	2	6	9	9	2	9
1	9	5	5	9	4	1	8	7	1

Այս երկու սիւնակներուն մէջ կրնա՞ս ապրող էակները իրերն բաժնել:



Գունաւորե՛ հետեւեալ պատկերը նախասիրած գոյներովդ:



ԵՐԻՑՈՒԿԸ, ՈՐ Կ'ԵՐԱԶԵՐ ՎԱՐԴ ԴԱՌՆԱԼ



Փոքրիկ քաղաքի մը մէջ, որ նոյնիսկ անուն չունէր, պարտեզ մը կար: Այդ պարտեզին մէջ գեղեցիկ ու կարմիր վարդ մը կ'աճէր:

Սակայն վարդէն ոչ շատ հեռու անպաշտպան երիցուկ մըն ալ կ'աճէր: Ան տակաւին նոր ծաղկած էր ու թերթիկները ճերմակ էին: Բազմաթիւ դաշտային ծաղիկներ կը շրջապատէին զինք: Բայց ոչ մէկ բան ուրախութիւն կը պատճառէր անոր: Իր փոքրիկ դեղին գլխուն մէջ միայն մէկ երազ կար՝ դառնալ գեղեցիկ, արտասովոր ծաղիկ մը:


Երիցուկը հիացմունքով կը նայէր միշտ խնամուած վարդին, որ երբ ծարաւ ըլլար, տերը անմիջապէս կը ջրեր զինք: Երբ յորդ անձրեւներ տեղային, զայն կը ծածկէին, ու ոչ մէկ աւելորդ կաթիլ կը թոջեր իր նուրբ թաւշեայ թերթիկները:

- Ի՛նչ լաւ կ'ապրի ան,- կը մտածէր երիցուկը:

- Երանի՛ ես իր տեղը ըլլայի,- չէր դադարէր երազելէն դեղին գլուխով ու սպիտակ երկար փերթերով ծաղիկը, որ կարծես իր տեսքով թիրթռնիկ մը ըլլար:

Սակայն օր մը փոքրիկ մը պարտեզին մէջ պտտած պահուն կը տեսնէ երիցուկը ու հիացած ինքնիրեն կ'ըսէ. «Ի՛նչ գեղեցիկ ծաղիկ է...»:

Երիցուկը սկիզբը չի հասկնար այդ բառերուն իմաստը, չէ՞ որ ան միշտ ինքզինք տգեղ բոյս մը կը համարէր: Բայց փոքրիկին արտայայտութենէն սպիտակ գեղեցկուհին կը հասկնայ, որ բոլոր ծաղիկներն ալ իսկապէս գեղեցիկ են:





ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՈՐԾԱԾՈՒԹԵԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԲԱՌԵՐ

Personal Computer	անձնական համակարգիչ
Option	ընտրանք
Network	հաղորդացանց
Monitor	ցուցանակ
Keyboard	ստեղնաշար
Password	ծածկաբառ
Path	ուղի
Menu	ընտրացանկ
File	տոմսածրար
Random Access Memory (R.A.M.)	յարամատոյց յիշողութիւն
Floppy Disk	դիրաթեք սկաւառակ
Hard Disk	կայուն սկաւառակ
Format	մասնաբաժին
Programing	ծրագրաւորում
Install	տեղադրել
Justification	ճշդում
Scanner	թուանշագրիչ
System	դրութիւն, համակարգ
Facebook	դիմատետր